2126.51/1885

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0046-21

Ձեռնարկողը՝ ***«Մառա և դուստրեր» ՍՊԸ***
Երևան, Վրացական 17 բն. 2

Գործունեությունը՝ ***Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0046-21

<03> 03 2021թ.

Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Գանձաքար համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Տավուշի մարզի Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծն իրականացվելու է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏԶՀ/:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գանձաքար համայնքում, գործող դպրոցի տարածքում, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված՝ 1.67392 հա հողամասի սահմաններում /վկայական N 07032019-11-0014/, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Դպրոցի կառուցապատման նպատակով օգտագործվելու է հողամասի 25077 քմ մակերեսով տարածքը, որից կառուցապատման նպատակով օգտագործվում է 24317 քմ, մնացածը թեքությունների պատճառով հնարավոր չէ կառուցապատել: Նախագծման համար հիմք է հանդիսացել Գանձաքարի համայնքապետարանի կողմից տրված № 03/1 առ. 08.07.2020թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Կառուցապատվող տեղամասում ռելիեֆն ունի դեպի արևելք թեքություն (թեքության անկյունը կազմում է 5°): Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 817.0-830.0 մետրի սահմաններում: Մինչև 10 մ խորության վրա տարածքում գրունտային ջրերը բացակայում

են:Գոյություն ունեցող դպրոցի կանաչապատ տարածքները նախատեսվում է հնարավորինս պահպանել, իսկ նախագծով նախատեսվում է ստեղծել 2803 քմ մակերեսով նոր կանաչապատ գոտի: Շինարարական աշխատանքների ազդեցության ենթակա՝ թվով 9 (8 գիհի և 1 թույա) նախատեսվում են տեղափոխել և վերատնկել դպրոցի տարածքում ծառերի կենսունակությամբ պայմանավորված: Վերատնկման աշխատանքները կկազմակերպվեն, կիրականացվեն աշնանային կամ գարնանային տնկարկի շրջանում:

Դպրոցի ընդհանուր՝ 25077.0 քմ հողատարածքում կառուցապատման մակերեսը կազմում է 3620.1 քմ մակերես: Դպրոցի շենքի ճարտարպետական լուծումը համապատասխանում է տարածքի ռելիեֆին:

Գործունեությունն իրականացվելու է երկու իրար հաջորդող փուլերով՝ մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժում և նոր շենքի կառուցում: Համաձայն նախագծի, դպրոցը բաղկացած կլինի սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 5 մասնաշենքերից: Դպրոցի համար նախագծված նոր կաթսայատունը կզբաղեցնի 27.8 քմ ընդհանուր մակերես: Մասնաշենքերից երկուսում /տարրական և միջին դասարաններ/ նախագծված է թվով 20 դասասենյակներ: Դպրոցի չորրորդ մասնաշենքը կծառայի որպես մարզադահլիճ, իսկ հինգերրոդը՝ հանդիսությունների դահլիճ, որոնք նախագծված են միահարկ: Երրորդ մասնաշենքում նախագծվել են 2-ական հանդերձարաններ՝ լողասենյակներով և սանհանգույցով: Ուսումնական մասնաշենքերը և երրորդ մասնաշենքը բաղկացած կլինեն 3 վերգետնյա հարկերից:Մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր՝ փայտյա ծպեղային համակարգով, որը կունենա նաև կազմակերպված արտաքին ջրահեռացում: Բոլոր մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումներում կօգտագործվեն միաձույլ երկաթբետոնե սյուներ, հեծաններ, պատեր, մետաղական ֆերմա և սենդվիչ պանելներ:

Նախագծվող դպրոցի տարածքում գոյություն ունեցող՝ 1131.6 քմ մակերեսով խաղահրապարակը պահպանվում է: Դպրոցի տարածքը նախատեսվում է բարեկարգել, որի շրջանակներում նախատեսված է ստեղծել 3085.5 քմ մակերեսով ասֆալտապատ գոտի և 1325.8 քմ մակերեսով սալիկապատ ծածկույթներ, ինչը նախատեսված է իրականացնել համապատասխան թեքություններով՝ ապահովելու նպատակով տարածքից մակերևութային ջրերի հեռացումը դեպի հարակից փողոց և կանաչապատ գոտիներ: Նորաստեղծ բարեկարգվող կանաչ գոտու մակերեսը կկազմի 2803 քմ:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ բնական և մեխանիկական եղանակով: Նախագծվող դպրոցի տարածքում նախատեսված է արտաքին լուսավորության համակարգ:

Նախագծված դպրոցի ջրամատակարարումն իրականացվելու է 300 մ հեռավորության վրա գտնվող գործող ջրագծի բաժանարար հորից՝ d=100 մմ ջրագծից՝ d=90մմ միացումով: Քանի որ կոյուղու համակարգը համայնքում բացակայում է, կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս ձևով կհեռացվեն նոր նախագծվող կենսաբանական մաքրման կայան և մաքրվելուց հետո կհեռացվեն դպրոցի հարակից տարածք: Նախատեսվում է տեղադրել 1.5 խ.մ/օր հզորությամբ «ТОПАС-С 8 Пр» անհատական մաքրման կայան:

Դպրոցի ջեռուցումը, նախատեսվում է իրագործել նոր կառուցվող կաթսայատան միջոցով՝ ջրային երկու կաթսաներով /յուրաքանչյուրը 300կվտ հզորությամբ/ բնական գազի առավելագույն՝ 57 մ³/ժ ծախսով: Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերը կհեռացվեն 300մմ տրամագծով և 9մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով: Տաք ջրամատակարարման համար կօգտագործվի արևային ֆոտովոլտային կայանից ստացված էլեկտրաէներգիան: Նախագծով դպրոցի տանիքին նախատեսվում է 24.49 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում:

02543163
ՓՈՐՁԱՓՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նորաստեղծ կանաչապատ գոտիների ոռոգումը կկազմակերպվի նախագծվող ոռոգման ցանցի միջոցով, ոռոգման ջուրը կվերցրվի հարևանությամբ հոսող գետից՝ սուզապոմպի միջոցով:

Դպրոցի շինարարության տևողությունը հաշվարկվել է 20 ամիս: Նախաշինարարական փուլում կիրականացվեն դպրոցի տարածքի ժամանակավոր մետաղական թիթեղներով ցանկապատում, շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, ինչպես նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և գոյություն ունեցող կոմունիկացիաներին միացման աշխատանքներ: Շինարարական հրապարակը, ներառյալ՝ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով, ինչի արդյունքում հնարավոր կլինի խուսափել բնապահպանական ազդեցություններից /աղմուկ և փոշի և այլն/ և կկրճատվի շինարարական աղբի ծավալները: Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և զոդման տեխնիկա, կբացառվի այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շին-կապալառուի պահեստ և կօգտագործվեն այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շինարարական աղբը /4775 մ^3 ծավալով/ կտեղափոխվի համայնքի վարչական տարածքում 2.5 կմ հեռավորությա վրա գտնվող աղբավայր:

Շինարարության ընթացքում հողային աշխատանքները ներառում են հետևյալ ծավալները.

- տարածքի համահարթեցման համար գրունտի հանույթ՝ 532 խմ, որն ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքում,
- դպրոցի հիմքերի համար խրամուղիների և փոսորակների փորում՝ 9890 խմ, որն ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքում,
- ցանկապատերի, արտաքին ինժեներական ցանցերի համար գրունտների մշակում 1831խմ ծավալով, որը նույնպես կօգտագործվի հետլիցքում,
- բարեկարգման/կանաչապատման համար բերվող սևահող՝ 561 խմ:

Հողային աշխատանքներից ավելորդ գրունտ չի առաջանա և վերջինիս տեղափոխման անհրաժեշտություն չկա:

Շինաշխատանքների համար պահանջվող ջրաքանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից: Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարության փուլի համար հաշվարկվել է հողային աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու արտանետումները /0.376գ/վրկ, կամ 0.95տ/շին.ժամանակահատված/, որի քանակները նվազեցնելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ՝ շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների տեղաշարժ՝ սահմանված չափաքանակով, պաստառների առկայությամբ և այլն:

Հեղուկ նյութերը, վառելիքի մնացորդային քանակները, քսայուղերը շինարարական հարթակ են տեղափոխվելու օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Հայտում վերլուծվել են նաև շինարարության ընթացքում աղմուկի, թրթռումների, երթևեկության ծանրաբեռնվածության հնարավոր ազդեցությունները շրջակա տարածքների

և սոցիալական միջավայրի վրա, նախատեսվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ: Նախատեսվել են նաև միջոցառումներ տարածքում առկա կանաչ գոտիների և բուսահողի պահպանմանը, աշխատանքի և աշխատողների առողջության անվտանգության ապահովմանն ուղղված՝ հնարավոր սոցիալական ազդեցությունները բացառելու նպատակով: Բոլոր բնապահպանական միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ):

Համաձայն նախագծի, կառուցապատումից հետո նախատեսվում է 2803 քմ մակերեսով տարածքում ստեղծել նոր կանաչապատ գոտի և ռացուցիչ իրականացնել ծառատունկ /տնկվելու է 26 հատ հացենի, 38 հատ կոնաձև թույա, 18 գնդաձև թույա/: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 561 խմ բուսահող, որից 271 խմ ծավալը նախատեսվում է բերել կառուցապատվող տարածք այլ վայրից: Ենթածրագրի շրջանակում իրականացվող կանաչապատման միջոցառումների գումարային արժեքը գնահատվել է ***4 731470*** ՀՀ դրամ, /ծառերի վերատնկումը, ծառատունկը, սիզամարգերի ստեղծումը, բուսահողի բերումը և փռումը/, որը ներառված է նախագծի ծավալաթերթերում:

Ծրագրի պատվիրատուի՝ ՀՏՋՀ-ի կողմից, կանոնավոր մոնիթորինգի միջոցով ստուգվելու է բնապահպանական միջոցառումների կատարման արդյունավետությունը, ներառյալ՝ տարածքում առկա ծառերի և թփերի աճման և կպչողականության մշտադիտարկման/վերահսկման իրականացումը: Հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է մեկ տարի, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառերը կփոխարինվեն նորերով: Կանաչապատ տարածքի հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գանձաքար համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք շինարար կապալառուի կողմից կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումն անհրաժեշտ է կազմակերպել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով անվտանգության ՇՆևԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» կանոնները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- պարսպապատել շինարարական հրապարակը,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գանձաքարի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքները /ներառյալ ծառերի վերատնկումը/ իրականացնել հայտում ներկայացված լուծումներին համապատասխան, որպես խնամքի պարտադիր միջոցառում՝ ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի համաձայն «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մառա և դուստրեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան

02543103
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS